




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

3025

9(47 925)
m-28

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

9(47.325)

14-28

ՀՈՒՅՆ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈՍԿԵՀԱՆՔԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ
ՏԵՂԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(Արտատպւած է Ս. Խ. Հ. Պետ. Համալսարանի Գիտական Տեղեկագրի
№ 1-ից)

Ե Ե Ր Ե Վ Ո Ւ Ն
1925

3(47.325)

Խ-28

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀՈՒՅՆ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈՍԿԵՀԱՆՔԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ
ՏԵՂԻ ՄԱՍԻՆ

1006
(24638)

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(Արտատպւած Հ. Ս. Խ. Հ. Պետ. Համալսարանի Գիտական Տեղեկագրի
№ 1-ից) 2012

ՅԵՐԵՎԱՆ
1925

10268

Հ. Ս. Խ. Հ. Պետ.

2004

38034 - 111

ՀՈՒՅՆ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈՍԿԵՀԱՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ով իր անձնական գննությունը առիթ է ունեցել հանձնալ Առաջավոր-Ասիան, առանց վարանումի պիտի խոստովանի, թե՛ մեկ կողմից առանց բավարար չափով ընդհանուր աշխարհագրական աղբյուրները գիտնալու և մյուս կողմից ել՝ առանց տեղական մասնավոր հարաբերությունները ճշտելու՝ հողիվ թե կարողանա նույն յերկրների հին աշխարհագրության արդյունավի զերակազմությունը ձեռք բերելու նպատակին հասնիլ:

Դոկ. Վալ. Բելք

Հին Հայաստանն ընդհանրապես համբավ հանել է իբր հանքերով հարուստ մի յերկիր. իրողությունն այն է սակայն, վոր շատ սակավ չափով ու փորակով մետաղահանքեր հայտնի յեն մեր յերկրի զանազան կողմերում և մանավանդ ել ավելի սակավաթիվ մշակվել ու այժմ ել մշակվում են: Խորհրդային Հայաստանում միայն Լոռի, Չանգեզուր, Իսկ Ադրբեջանում Գանձակի մոտ մշակվում են պղնձահանքեր, Իսկ արևմտյան բաժնում՝ Արգանայի կամ Արդնիի, Կապան-Մատենի և Բաբեղդի մոտ ել Մատեն գյուղի սահմանում պղնձահանքերի նախնական ձևի մշակությունից դատ՝ ուրիշ մետաղահանքերի մշակություն հայտնի չե: Վերջին համեմատողական պատերազմի շրջանում առաջ խաղացող ուսս բանակի հետ մի քանի հանքարան ճարտարագետներ հնարավորություն ունեցան ինչ ինչ տեղեր հետաքննություններ կատարել և, ինչպես իրենց զեկուցումներից ու հրատարակություններից յերևում է, շատ տեղեր գտել են զանազան տեսակի հանքերի հետքեր: Սակայն ինձի հայտնի չե, թե ներկա հանքարաններ վոնե տեղ մասնանշած լինեն վոսկի հանքի դոյություն:

Հին Հայաստանի հանքագիտությունը հանձնելով ապագային ու մասնագետների ուսումնասիրությունը՝ այստեղ մեր նպատակը պիտի լինի պլը պտել հեռավոր անցյալը և տեսնել, թե մատենագրական վոնե վկայություն կամ ակնարկություն կա՞ հին Հայաստանի վոսկեհանքի կամ հանքերի դոյության մասին և թե նրանց տեղն ուր Բելք և փնտռի:

Հայ պատմիչները բնավ կամ շատ սակավ տեղեկություններ են տալիս մեր յերկրի բնական հարստությունների, տնտեսական վիճակի, համայնական հորինվածքի ու կենցաղի, ինչպես և ազգային մշակույթի մա-



22389. 60 P

սին ընդհանրապես: Այս մասին բացատրություն և կազմում **Մ. Խորենացի**6, վոր իր աշխարհագրությունը մեջ Հայաստանի նահանգները թվարկած միջոցին՝ համառոտակի հիշում և նաև յուրաքանչյուր գավառին հատուկ կարևոր բույսերն ու կենդանիները, ինչպես և հանքերը:

Վերջին դարերի մատենագիրներից **Հակոբ Կարենցի**6 (1622-1662) իր «Նկարագիր Վերին Հայոց» փոքրիկ աշխատությունը մեջ տալիս և հետաքրքրական տեղեկություններ այս ուղղությամբ. այսպես **Գյուլմուց-Խա-նի**6 համար գրում է. «Եւ անտի ուղիղ ի կողմն հիւսիսայ ձորն է **Ծառա-խոյ**. ունի գիւղք և փոքր բերդօրայք... Եւ ունի քաղաք զկիւմիւշխանան... և բնակիչք սորա հայ և հոռոմք բազում... և ելանէ աստի ոսկի և արծաթ ընտիր բազում. ելանէ նաև պղինձ. արծիւ և երկաթ բազում, որ Արզրում և շրջակայքն սորա ընուն» (եջ 15): Իսկ մյուս մատենագիրներն, որևէ Փարպեցին, վորի մասին իր տեղումը կը խոսենք, մութն ակնարկություններ միայն ունին, վորոնցից շատ քիչ բան կարելի չի գուրս բերել: Ինչպես հնագույն պատմական շատ զեպքերի գոյություն և շատերի չեղ ստուգություն համար միշտ ստիպված ենք գիմել ոտար պատմիչները՝ մանավանդ հույն և հռոմայեցի, նույնպես և առաջադրված խնդրի համար պիտի գիմենք նրանց վկայություն:

Հույն պատմիչներից առաջինը **Ստրաբոն** և, վոր խոսում և Հայաստանում գոյություն ունեցող վոսկեհանքի գոյություն մասին. — «Սուսպիրիտիս յիս յերկրի մեջ՝ Կարալլաի մոտ (=Կաւալլա=Կարաղլա) գտնվում է յին վոսկու հանքեր, ուր Աղեքսանդր (Մեծ) ուղարկեց Մենոն զորքով. սակայն տեղացիներից սպանվեցավ» (Գիրք. ԺԱ. գլ. ԺԴ. 9.):

Ուրեմն Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակ (336-323 թ. թ.) Սուսպիրիտիս կոչված տեղում վոսկեհանքեր կային և այնքան համբավ հանած, վոր մեծ աշխարհակալը կամենում է գրավել և դատ մի զորարածին և ուղարկում նույն կողմը. սակայն բնիկները պաշտպանում են իրենց հարստությունը՝ սպանելով Մենոն զորավարին ու զորքերին: Արդ՝ պետք և **ճահլ Հայաստանում Սուսպիրիտիս տեղը**: Նորագույն հնախոսները տարակարծիք են այս մասին: **Կիպերս** այս անունը նույնացնում Սպեր=Խուպիր անվան հետ. մինչդեռ Դոկ. Հ. Մոնցկա համաձայն չի առաջինին՝ հետևելով բացատրությունը. — «Սասպիրեաները (Saspeires) ըստ Հերոդոտի բնակում էին Կոլքիսներին (Կոլխեր) շատ մոտիկ և Մատիլենների ու Ալարոդների հետ միասին կազմում էին մեկ շրջան (nomos)» (Հրդ. I. 104. III. 94. IV. 37 և 40. VII. 79.):

Դոկ. Մոնցկա շարունակում է. — «Պոկոպ ալիլի վորոշ՝ գետեղում և Սասպիեններն Ակամսիսի վրա (Bell. Got. IV. 2), վորի վերին և միջին հոսանքն իրր Խուպիր յերևան է գալիս նոր Հայաստանի քարտեզների վրա: Այս համապատասխանում է **Մ. Խորենացու** Սպեր գավառին, վորը Բարձր Հայքի յոթներորդ գավառն է, վորի միջով ըստ հեղինակին՝ հոսում է Վոն (=Ակամսիս այժմ ձորոխ) գետը: Հավանաբար Քանոփոնի Եսպերիտները (Esperitai) նույնն են Սասպիլեաների (Saspeires) հետ: (Anab. VII.

8.25) և Regio Speria սրան և պատկանում, վոր Exc. Latina Barb-ի մեջ հիշվում է. առնթիւր Կոլի (Coli) և Խորձենի (Chorzini):¹⁾

«Ստրաբոնի Սուսպիրիտիս (Suspiritis, Souspiritis, Hispiritis XI. 503, 529, 530) նույնացումը Սպերի հետ, վոր **Կիպերս** իր ատլասի մեջ բնութենում է, անկարելի չէ: Բոլորովին մի կողմ դնելով այն հավանականությունը, թե Աղեքսանդր Մեծ վոսկու համար սպաներ զրկած լինի՝ իրեն միանգամայն անձանոթ հյուսիսային Հայաստան, Ստրաբոն այս անունը կապում է **Կամբադենի** (Kambadene) հետ (XI. 530), վորն ըստ Պսլումբուսի փնտռելու յենք Ասորեստանի և Միդիայի սահմանների վրա: Սրանից հետևում է, թե Ստրաբոնի Սուսպիրիտիս փնտռելու ենք հարավային Հայաստանում և վոչ թե հյուսիսային, ուր գտնվում է Սպեր: Ավելի շուտ մենք կը վերագտնենք Սուսպիրիտիս նոր հայերենի **Խուպերուս** կամ **Խուպերս** (=Սպերա) անվան մեջ՝ վոր Հայաստանի հարավ՝ ալիլի ճիշտ՝ Բոնտան գետի շրջանը Մոկքի և Աղձնիքի սահմանի վրա չի գտնվում: Այս տեղի հին անունը ծանոթ չե մեզի (Հյուրչման, Հին Հայտեղանունները. հր. թգ. 6. ծթ. 2): **Մարքուս** կարծում է Syspiritis անվան արմատը գտած լինել սեպագրական Շուպրիա (Supria) անվան մեջ՝ վոր **Շսբե** յենթադրում է Վանա հարավ-արևմտյան կողմը՝ սակայն եփրատի մոտ»:²⁾

Մենք գիտամք մեջ բերինք հեղինակի ամբողջ հատվածը, վորպեսզի ընթերցողն մոտից ծանոթանա նրա բոլոր բացատրություններին, վորից հետևում է, թե Ստրաբոնի Սուսպիրիտը պիտի փնտռենք ներկա Սպերաի տեղը, ուր պետք է գտնվեին վոսկեհանքեր և ուր Աղեքսանդր ուղարկեց իր զորավարին:

Ավստրիացի գիտունին այս յեզրակացությունն առանց առարկության չե. նախ՝ ասենք, թե «Աղեքսանդրի համար միանգամայն անձանոթ» չեք կարող լինել հյուսիսային Հայաստանը, քանի վոր ամբողջ Հայաստան յենթարկված եր իր իշխանությունը և իրր իր պետություն մի նահանգը՝ կառավարվում եր իր կողմից նշանակված մի ղեկավարով, թեպետ խաղաղ իրենց լեռներին ապաստանած դեռ ընկճված չլինեին: Յերկրորդ՝ Սպեր գավառն և ընդհանրապես Խաղտյաց աշխարհը՝ իր հանքերի պատճառով հույներին՝ ծովու կողմից շատ ալիլի լավ ծանոթ եր և նույն իսկ մատչելի և այն ալիլի հին ժամանակներից ի վեր (հիշել վոսկե գեղմի առատությունը) քան հարավային Հայաստանի Սպերաը և յերրորդ՝ մենք գիտենք, և այժմ ել տեսնում ենք, վոր «վոսկու համար» ինչպես նոր, նույնպես և հին աշխարհի մարդիկ գնում էին և գնում են աշխարհի վոր անկյուն ել գտնվեր այս ազնիվ մետաղը՝ սառցային բեկուում, թե Ափրիկայի տոթակեզ անապատում: Բայց մենք գառնաք իր բուն փաստերին:

¹⁾ Ծթ. Կոլ=Կոլ, Կոլա ներկա Արդանանի՝ Կուր գետի ակնաղբյուրների շրջանը, վոր թրքական արտասանությամբ Գյոլե կոչվում է. իսկ Խորձեն՝ Ախալքալսկի շրջանն է:

²⁾ Dr. Montzka «Die Landschaften Gross Armeniens.» եջ. 12-13:

Նախ՝ Ստրաբոնի ամբողջ հատվածը չէ, վոր նկատի է առել հարգելի գիտունը. քննարկում մտաբերելու կարևոր է՝ ել ավելի բնորոշելու հանքերի տեղն ու շրջականները: Ահա, իր հատվածի ամբողջությունը. «Syspinitis» Սիսպիրիտիս յերկրի մեջ կարալլայի մոտ գտնվում է յին վոսկենհանքեր, ուր Ալեքսանդր ուղարկեց Մենոն զորքով. սակայն նա սպանվեցավ տեղացիներից: Այնտեղ կան նաև ուրիշ մեծադահաճեքեր և նրանցից մեկը՝ այսպես կոչված կարմրագեղ (Minning) վորն կոչվում է նույնպես Հալկա-կան գուլն և նման է ծիրանեղույնի (շիկակարմիր)» (Գրք. ԺԱ. գլ. ԺԲ. 9):

Այստեղ ուրեմն բացի վոսկու հանքերից՝ կային նաև ուրիշ «մետաղահանքեր» ել և «կարմրագեղ»-ի հանք. արդ՝ պետք է նկատի ունենալ, իոր Ստրաբոնի որով և նրանից առաջ Պաղատիքն էր համարվ հանած իրը հանքերով հարուստ յերկիր, վորին կից էր և Սպեր: Նույն պատմիչն մի ուրիշ տեղ ահա թե ինչ է ասում Պաղատիքի հանքագործության մասին. «Ներկա խաղերը նախնազույն ժամանակները կոչվում էին Պալյուր-ներ (Chalyb): Սրանց ուղղակի մոտը գտնվում էր Փառնակյա (Pharnacia), վորը ծովու կողմից թյունոս ձկան (thunfisch)՝ վորսի առավելությունն է վայելում (վորովհետև սուսիքն անգամ այստեղ գտնվեցավ այս ձուկը), լե-րան կողմից սակայն կան բովք (հանքեր), վորտեղից այժմ թեպետ միայն լեկաք է հանվում, բայց նախապես շահագործվում էր նաև արծաթ: Ընդ-հանրապես ծովեզրն այս տեղերում շատ նեղ է, վորովհետև նրա ուղղակի վերև բարձրանում են լեռները հաբուս մեծադահաճեքով և անտառներով. բայց յերկրագործության շատ չկա: Այս լեռնայիններին քննում է միայն մե-ծադահաճեքի շահագործությունը. ծովային շահագործումից ել ձկնորսու-թյունը՝ մասնավորաբար թյունոս և զեյփին»³⁾:

Մոնցկայի ցույց տված ներկա Իսպերտ՝ Բոհտանի շրջանում հայտնի չէ իրը հանքառատ յերկիր, գոնե մեղի հայտնի չէ այս մասին մատենա-գրական վո՛ւ և հիշատակություն, մինչդեռ Շորոխի հովիտն ու Պարխար լեռնաշղթան (= Պաղատիք) միշտ հոչակված է իրը հանքերով հարուստ մի յերկիր և այսօր ել նույն տեղերում գտնված բազմաթիվ նմուշները նույնը հաստատում են. այսպես գերման մի գրող՝ Karl Herman Müller⁴⁾ իր պատրաստած ասիական թուրքիայի քարտեզի վրա նույն շրջանում նշա-նակել է արծաթ, պղինձ, կապար, ցինկ, ծծումբ, հրաբուխ (պիրիտ), մագ-նետիտ և քարածուխ: Մենք արդեն տեսանք, թե Ստրաբոն հիշում է նաև յերկաք, վոր իր ժամանակում մշակվում էր և կարմրագեղ:

Մեջ բերած վկայություններն իրենց մանրամասնությամբ պետք է բավեն համոզելու, թե Ստրաբոնի հիշած Սուսպիրիտիսը գտնվում էր այս հանգաման յերկրում լեզվ վոչ թե Սպերում:

Յերկրորդ՝ Մոնցկա իր ուսումնասիրության հիմը դնում է «Կամ-

³⁾ Ստրաբոն, գրք. ԺԱ. 549, 19. հմտվ յեվ 551, 23:

⁴⁾ Die Bagdadban—Bodenschätze und Bodenkultur in klein—Asien, Hamburg.

բաղեցնե՞ն անունը՝ ասելով՝ «Ստրաբոն այս անունը (Սուսպիրիտիս) կո-պում է կամրագենեյի հետ, վոր ըստ Պալոմենոսի՝ փնտոելու յենք Ասորես-տանի և Միդիայի սահմանների վրա»: Բայց հետաքրքրականն այն է, վոր կամրագենե (Kambadene) անունը չկա Ստրաբոնի մեջ այնտեղ (ԺԱ. 530), վորը վկայություն է կոչում հեղինակը: Ահա պատմիչի առածը նույն տե-ղում. «Արմենիոսի ուղեկիցներից վոմանք պետք է բնակած լինին Ակե-լիսենե (= Եկեկիսայ), վորը նախապես գտնվում էր Սոփենների (Sophene) տիրապետության տակ. մյուսները սակայն բնակեցան Սիսպիրիտիս (Sys-pirititis) մինչև Կալախենեի (Kalachene) կողմերն ու Ադիարինե՝ Հայաստա-նի սահմաններից մյուս կողմը»: Ուրիշ մի տեղ (գլ. Դ. 8) դարձյալ ասում է. «Արմենիոսի ընկերները... բնակեցան Ակեկիսենե և Սիսպիրիտիս մին-չև Կալախենե և Ադիարինե»: Այսպես ուրեմն տեսնվում է, վոր «Կամրա-գենե» անունը չունի Ստրաբոն վոչ միայն Մոնցկայի ցույց տված տեղը, այլ և նույն գրքի մեջ վոչ մի տեղ չկարողացա գտնել:

Marguarts⁵⁾, վոր գիտե այս տեղը և ոգտվում է նույն վկայությունից, նույնպես Կալախենե գիտե:

Ուրեմն Սուսպիրիտիս ըստ Ստրաբոնի գտնվում էր Կարալլայի մոտ, ուր էլ յին և վոսկենհանքերը. իսկ «Կարալլա» անվան համար Ստրաբոնի գերման թարգմանիչը A. Forbiger, վորու թարգմանությունն ենք գործա-ծում այս կոչումների համար, իր ծանոթության մեջ առում է. «Այսպես (այսինքն կարալլա) վոչ թե կամրալա (Kambala), ինչպես սովորաբար գրում են, ունին լավագույն գրչագրերը, վորոնց հետևում են յեն Kramer-ի և Meineke-ի հետ: Այս տեղանունը պատահում է Kaballa ձևով նաև Cinamus-ի մոտ Hist. 2,5. իսկ այլուպես միանգամայն անծանոթ է»: Արդ՝ այսպիսով ընկնում է Մոնցկայի միակ հենարանը. քանի վոր Ստրաբոն չի ձանաչում Կամրագենե տեղը, վոր Պալոմենոս դնում է Ասորեստանի և Մարաստանի սահմանների վրա: Մինչդեռ վոսկենհանքերը գտնվում էին Սիսպիրիտիս յերկրի մեջ կարալլայի մոտ, վոչ թե Կալախենե կամ Կալախանի մոտ: Իսկ թե Մոնցկա իր՝ վկայության կոչած «Կամրագենե» անունը վերտեղից առել է, չենք իմանում, քանի վոր Ստրաբոնից չէ:

Սակայն և այնպես մի ավելի կարևոր առաջարկություն կարելի է ա-նել ի նպաստ Սիսպիրիտիսի և Իսպերտի նույն անուն լինելուն և հետեա-րաբ Բոհտանի շրջանում գտնվելուն: Սիսպիրիտիս Ստրաբոն կապում է Ակե-լիսենեյի, Կալախենեյի և Ադյարենեյի հետ. յերկրորդ անգամ դարձյալ

⁵⁾ Մեկ ուրիշ ճիշդ սակայն առաջ շարժվեցավ դեպի՝ վերջն այն-րան նշանավոր դարձած Illirisos-ի կրնի մոտ (Halasos այսօրվա Լընե՝ Մուֆարդինից հյուսիս) տարածվող Շուպրիա (Supria), (Soupiritis) յեվ այն-տեղ հաստատվեցավ. իսկ նրանցից հատվածական խմբեր առաջացան մին-չև Կալախենե (Նեմրուտի կողմերը) յեվ Ադիարինե Ասորեստանի մեջ՝ Հայաստանի սահմաններից անդին:

Ակելիտին, Սիսպիրիտի մինչև Կալախենե և Ադիարինե Հայաստանի սահմաններից անդին. ուստի անունների հաջորդականությունն է՝ Ակելիտին — Սիսպիրիտի — Կալախենե — Ադիարինե: Այս անուններից Ակելիտին կամ Եկելիտին հաստատված է, թե նույնն է հայ մատենագիրների Յեկելյաց = Յեկելյաց = Յերզնկա գավառի հետ. Ադիարինի տեղ նույնպես հայտնի է Ասորեստանում՝ Արրելայի և Գավգամելայի շրջանը. ուրեմն այս յերկու տեղերի միջև պետք է զետեղել Սիսպիրիտի և Կալախենե. այս դեպքում Սիսպիրիտի իր տեղովը կարող է համապատասխանել ներկա Բաղերտին, վորը Հյուբեման գնում է Բոհաան գետի հյուսիսային կողմը, արևելքից մինչև Բեղար գյուղը՝ Մոկա գետի վրա... Մոտավորապես հայոց Աղծնիք և և Մոկա նահանգների սահմանների վրա:

Մեր կարծիքով հույն մատենագիրների (Հերոդոտ, Քսենոֆոն, Ստրաբոն, Պրոկոպ) հիշած Saspeires, Hispeires, Esperitai, Suspiris անունը պետք է դասել միայն Ստրաբոնին հայտնի Syspirites⁶⁾ անունից. առաջինն աղա-հովաբար նույնանում է Sper — Սպեր անվան հետ, վորը գտնվում է Ճորոխի հովտում. իսկ յերկրորդը Տիգրիսի ավազանում. սահմանակից Կալախենի և Ադյարենի: Վրակու հանքերը գտնվում էյին Ճորոխի հովտում: Ուստի Կիսկերտի, Սուսպիրիտի և Սպերի նույնացումը տակավին պետք է մնա իր ուժին մեջ, քանի դեռ չի հաստատվել վրակու հանքի գոյությունը Սպերտի մեջ և «Կամրաղենի» գոյությունն ու տեղը, մինչդեռ, ինչպես պիտի տեսնենք, Սպերի շրջանում վրակու հանքի գոյությունը անհերքելի կերպով հաստատվում է Պրոկոպի տեղեկություններով:

Այժմ գտնանք Պրոկոպին: Ստրաբոն Պոնտացի (Ամասիա) եր (ծնծ. շուրջ 63. Ն. ք. Ք.) և քաջածանոթ փոքր ասիական և մանավանդ Պոնտոսի վերաբերյալ Պրոկոպիոս (մեռած 565. ին Ն. Ք.) թեպետ Պալեստինյի (Կեսարիա), բայց նշանավոր Բելիսարիոս զորավարին իբր խորհրդական ատենադպիրը մասնակցել է նրա բոլոր արշավանքներին Միջագետքում և փոքր Ասիայում և իբր ականատես նկարագրել ու պատմել է շատ իրողություններ ու դեպքեր. ուստի իր հաղորդած տեղեկությունները նույնքան արժանահավատ են, վորքան առաջինին:

Պրոկոպ իր «Bell. Pers» — «Պարսկական Պատերազմներ» յերկին մեջ հիշում է յերկու բերդի անուն՝ Փարանգիոն (Pharangion) և Բոլոն (Bolon — Բոլոն), վորոնք գտնվելով բաժնված Հայաստանի Հոռոմ — Պարսիկ սահմանի վրա՝ հաճախ իրարու ձեռքից հափշտակում էյին այնքան զանգված վրակի հանքերի պահեստով: Այս յերկու անունները, վորքան մեզի հայտնի չե (Բոլի մասին վերջը կտեսնենք) չեն հիշվում վոչ հայ մատենագիրների և վոչ էլ ուրիշ հին հույն պատմիչների յերկերում:

Նոր հեղինակներից այս յերկու բերդերի մասին խոսել են Հ. Ղ. Ին-

ճիճյան և Ն. Ա. զոնց, վորոնց հետ ծանոթանալն նույնպես կարևոր է մեր նյութի ամբողջության համար: Հ. Ղ. Ինճիճյան⁷⁾ խոսելով Հայաստանի վրակեհանքերի մասին՝ ասում է. — «Վրակու կամ Պոլու, զոր համարիմ լինել Բալու, արդ մօտ ի Բալու է Արկնի... և այժմ կոչի Արդնի, նաև Արդանա: Զայն զայս անուն պարա է համարել այլալուծեամբ կոչեցեալ ի Պրոկոպիոսէ Ֆարգանիոն, որով առավել մերձանայր յուղիդն զի որպես ի Ֆարանգիոն՝ նույնպես յԱրդանա են մինչև ցայժմ հանք ունիոյ»:

Հեղինակն սխալվում է անտարակույս, յերբ առանց նկատի առնելու Պրոկոպի տված տեղագրական մանրամասնությունները, վորոնք հետո պիտի տեսնենք, Բոլոն կամ Բոլոն (ինքը կարդում է Պոլու) նույնացնում է Բալուի և Փարանգիոն (Ֆարգանիոն)՝ Արդնի հետ: Այս անհաս ու քմահաճ մերձեցման մասին ավելին խոսել ավելորդ ենք համարում:

Ավելի ուշագրավ են Ն. Ա. զոնցի⁸⁾ բացատրությունները, վորոնց հետ առիթ ունեցանք ծանոթանալու մեր աշխատությունը վերջացնելուց շատ ժամանակ վերջը միայն: Իրարից անկախ յերկուքս էլ յերբեմն նույն յեղրակացություն հանգել ենք, ինչպես որինակ Վահանին հանձնված վրակեհանքը պիտի լինի Փարանգիոնի վրակեհանքը. շատ կետերում սակայն իրարից տարբերվում ենք. ուստի հարկ ենք համարում մեջ բերել նրա բոլոր ասածները: — «Հոռոմների Թեոդոսիոսով ամրոցին իբր հակադիր՝ Պարսիկ հողի վրա գտնվում էր Բոլ, Բոլ բերդը՝ Բասեն գավառում՝ վոչ հեռու Թեոդոսիոսից... Բոլը ծանոթ էր նաև արեմտյան պատմիչին և տհաղին զեր և խաղացել է. զարու քաղաքական դեպքերում: Նրա տեղը ճշտորեն հայտնի չէ. մեկ ցուցման նայելով՝ գտնվում էր Բասենում, իսկ ըստ մյուսին՝ Թեոդոսիոսի սահմաններին մոտիկ: Սովորաբար Բոլը նույնացնում են Հասան-Գալեյի հետ: Բայց Հասան-Գալեյի ցեղը գտնվում էր Վաղարշապետ, ուր Ներսես Շինողը հիմնարկեց Ս. Աստվածածնա յեկեղեցին: ...Մեզի ավելի ճշմարտանման է թվում Բոլը փնտել զրացի Տայք նահանգի Բուխայի սահմաններին մոտ՝ նրանց անունների համահնչությամբ պատճառով: Բուխա գրավում էր Ութի գետի բազուկներից մեկի ակնադրյուրի շրջանը՝ Բասենին սահմանակից: Կարգաբար լեռների մեջ՝ յերկու գավառների միջև այժմ գտնվում է Բուա-Գալեյ բերդը: Յեթե Բուա առաջ և զալիս Բուհա, Բուխա-ից, այն ժամանակ Բուա-Գալեյի մեջ ունենք հին Բոլ = Բոլը»:

«Բոլի հետ անրաժանելիորեն կապված է Փարանգիոն տեղի քաղաքական ճակատագիրը, ուրտեղից վրակի եր հանվում պարսից աբալի համար: Գիտենք, թե նա գտնվում էր հայ հողի վրա Ծաների սահմանին մոտ, վորտեղից սկիզբն է առնում Բուա կամ Վոա գետը: Բուա համապատասխանում է հայ աշխրհ. Վոհ ձևին և և Ճորոխը՝ ավելի ճիշտ՝ նրա վերին հոսանքը. Ճորոխի ակնադրյուրը գտնվում է Բալի շրջակաները: Հիների

⁶⁾ Այս անվան Suspiritis ձևին էլ կա, վոր Groskurt բնդում է իբր ուղիղը. Հյուբեման նույնպես առաջարկում է կարդալ Suspiritis — Սուսպիրիտիս: (Հին Հայտեղանունները. Հ. թրգ. 6):

⁷⁾ «Հնախոսություն Հայաստանի» հտ. Ա. 188:

⁸⁾ «Հայաստանը Յուստինիանոսի ժամանակ» 24-25:

վկայություն համեմատ՝ Սպիրիտի մեջ կոչին վոսկե հանքեր, վորոնք շահողորդել էյին մինչև իսկ Ալեքսանդր Մակեդոնացուն։ Այս ծանոթությունը Փառանգիոն նոյնանում է հայ Սպերի հետ, դասական Սիպերի-իս։ Վասան Մամիկոնյանի մասին՝ վոսկեհանքի համար եղած մատնությունը՝ հավանություն վերաբերվում էր Սպերի հանքերին»...

«Ճորոխի ձորում Ծանկեր սահմանակից էր պարսկական իշխանության և Տայք գավառին՝ սկսելով Փառանգիոն-Իսպերից մինչև Տուխարս բերդը՝ այժմ Խերխ, հետո Գուգարք, Կղարձ գավառներին՝ Արտանուշ գետի վրա»։

Ազոնց ծանոթության մեջ ասում է. — «Փառանգիոնի ծագումը մուխն է։ Դեսուսեհիս ենթադրում է, թե հավանաբար առաջ եկած լինի Pharangs՝ հեղեղատ՝ ձոր, հովիտ բառից։ ԻճԵԻճԻԱՆ նոյնացնում է Արդնիի հետ կարգավոր Ֆարգանուն։ Հեղինակի to Pharangion kalumenon (= Փառանգիոն անվանված) արտահայտությունից տեսնվում է թե Pharangius տեղական բառ է, և մեզի թվում է, թե նա ուրիշ բան չէ, բայց եթե պարսկերեն farhang հյր. հրահանգ՝ մշակելու նշանակությունը՝ գործարան, հանք = գործ վոսկեհանքի։ Ազոնց»։

Ազոնցի համոզման համար պիտի խոսի մեր ամբողջ ուսումնասիրությունը. ուստի այստեղ նկատի չենք առնում միայն անունների ստուգաբանությունը և տեղերի մերձեցումների մասին ասածները։ Այսպես անհիմն ենք համարում Բոլ = Բոլ և Բուխա ու Բուա անունների նոյնացումը. հնչախոսական վոչ մի բացատրություն չի տալիս հեղինակը, մանավանդ յերբ տեղով էլ ինչպես պիտի տեսնենք, այնքան իրարից հեռու են գտնվում, ուստի իր ասածն ավելի մի արժեք չի ներկայացնում քան Ինձիճյանի Փառանգիոնի ու Ֆարգանունի — Արդանայի մերձեցումը։ Բացի սրանից՝ Վազար Փարսեցիին վորոշ կերպով ասում է, թե Բոլ բերդը գտնվում էր Բասեհում, մինչդեռ Բուխա Տայքի մեկ գավառն է։ Դարձյալ Պրոկոպ Բոլ և Փառանգիոն միշտ «անբաժան» հիշում է և վորոշակի ասում, թե վոսկեհանքը գտնվում էր Երանց մոտ. իսկ Ազոնց վոսկեհանքը գտնում է Սպերի մոտ, ուստի չէր կարող Բասենի սահմանների վրա գտնվել։ Եթե մինչև իսկ Բոլ-Բուխա և Բուա նոյն բառերն էլ լինին, տեղերի հեռավորության և տեղագրական ուրիշ պայմաններ անկարելի են դարձնում Փառանգիոնի հետ հիշված Բոլ նոյնացնել Բուխա-Բուա-ի հետ և մինչև իսկ Փարսեցու հիշած Բոլ բերդի հետ։

Ազոնց հակասության մեջ է ընկնում, յերբ գրում է. «Հոռոմների Թեոդոսիոսը բերդին իբր հակակշիռ պարսիկ հողի վրա գտնվում էր Բոլ, Բոլ բերդը Բասեն գավառում՝ վոչ հեռու Թեոդոսիոսից»։ ուրեմն չէր կարող Բուա-Գալեյի հետ նոյն լինել, վոր Տայքումն էր։ Սրանից զատ՝ վերը Բասենում գտնվին ու Թեոդոսիոսի մոտ լինելը հակադիր չեն իրարու, մինչդեռ փոքր ինչ վարն ասում է — «մեկ ցուցումին նայելով՝ նա գտնվում էր Բասենում, իսկ ըստ մյուսին՝ Թեոդոսիոսի սահմանների վրա»։ Բոլը կարող էր լինել Բասենում՝ միևնույն ժամանակ և Թեոդոսիոսի սահմանների վրա՝ իբր սահմանակից տեղի։

Ազոնց ասում է նաև. — «Հասան-Գալեյի տեղը գտնվում էր Վաղարշակեն, ուր Ներսես Շինող հիմնեց Ս. Աստվածածնի յեկեղեցին»։ Վաղարշակեթը գտնվում է Բագրեանդում և վոչ թե Բասենում. հեղինակն այս անունը չփոխում է Վաղարշակենի հետ անշուշտ, վորը Բասենում լինելով՝ գտնվում էր վոչ թե Հասան-Գալեյի տեղը, այլ «ի տեղում» ուր խառնին Մուրց և Երասիս» (Խրն. ր. կե.). ուրեմն այժմ Քյոփու-Քյոլի տեղը։ Վաղարշակեթ անունն է, վոր Պարսիկ և Արար պատմիչները գրում են Վալաշակեն, վորից և ներկայի Ալաշակեն անունը։ Ազոնց՝ Ներսես Շինողի կառուցած ս. Աստվածածնա յեկեղեցին չփոխում է Բասենի ս. Աստվածածնա վանքի հետ. մինչդեռ այստեղ խոսքը վերաբերվում է քաղաքի յեկեղեցուն և վոչ թե մի վանքի, ինչպիսին է Բասենում եղածը. Ալաշակեթի = Թոփրազ-Գալեյի յեկեղեցին էլ Աստվածածնի անունով է։

Այս վերլուծումից պարզ տեսնվում է, թե հեղինակը չէ կարողացել պատկերացնել տեղագրական պայմանները, և արդեն ուսանց յերկրը անձամբ տեսած լինելով՝ կարելի չէ չէ, մանավանդ յերբ ուղարկության չառնվին աղբյուրների մանրամասնությունները, ինչպես յեղեղ և այս դեպքում։

Փառանգիոնի տեղի մասին Ազոնց գրում է. — հինների վկայության համեմատ՝ Սպիրիտի մեջ կոչին վոսկեհանքեր...։ Այս վկայությունը Փառանգիոնը նոյնանում է հայ Սպերի հետ՝ դասական Սիպերի-իս. — ավելի վոր դարձյալ՝ Փառանգիոն — Իսպիր։ Փառանգիոն տեղով չի կարող նոյնանալ Սպերին, քանի վոր վերջինս հոռոմների ձեռքն էր, մինչդեռ Փառանգիոն՝ պարսիկների և այս երկուքը պետք է վոր իրարից բավական հեռու լինեյին, վորովհետև Փառանգիոն ու Բոլ բերդերը Ճորոխի ակնադրյուրի շրջանումն էյին և մոտ՝ Թեոդոսիոսի սահմաններին. իսկ Սպերը հեռու է նոյն սահմաններից։ Սպերի և Կարինի միջև մեկ կողմից կա Շաղագոմ գավառը, իսկ միւս կողմից Ոքաղ։ Այն ինչ Փառանգիոն պետք է գտնվեր Կարինին կից մի գավառում, ինչպիսին է Ոքաղը։

Ազոնց խոստովանելուց հետո՝ թե Փառանգիոն անվան ծագումը, «մուխն է», բայց և այնպես փորձում է ստուգաբանել. հախ հիշում է Դեսուսեհիս pharangs «ձոր», հեղեղատ՝ նշանակությունը. ապա ԻճԵԻճԻԱՆ «Ֆարգանուն» և վերջը տալիս է իրենը, հիմնվելով Պրոկոպի to Pharangion kaloumenon Փառանգիոն անվանված արտահայտությունը վրա՝ ենթադրում է, թե Փառանգիոն տեղ ցույց տվող մի բառ է և վոչ թե բերդի անունը, ուստի ուրիշ վոչինչ է, բայց եթե պարսկ. farhang, հյր. հրահանգ (մշակելու) գործարան, հանք նշանակությունը։ Այստեղ նոյնպես հնչական պահանջները նկատի չեն առնվել՝ Pharangion-ից հանում է farhang. իսկ «հրահանգ»-ին էլ տալիս է այնպիսի նշանակություն, վոր այս բառը բնավ չունի վոչ պարսկերենում և վոչ էլ հայերենում։ Մենք կարծում ենք, թե ներկի չէ բառերին տալ այն իմաստը, վորը կամենում ենք ունենալ՝ բոլորովին անտեսելով նրանց բուն նշանակությունը։

Պրոկոպի անգլիացի թարգմանիչը՝ H. B. Dewing, վորից ոգտվում ենք և մենք, միշտ էլ իբր բերդ գիտե թե Բոլն և թե Փառանգիոն։ Վեր-

Չինիս համար վերը մեջ բերված յերեք ստուգաբանություններն ել վոչ մի արժեք չունեն, վերոհիշյալ չեն հիմնավորվում լեզվաքննական որոնքներով ուստի և միանգամայն բռնազրոտիկ են: ⁹⁾

⁹⁾ Այստեղ ավելորդ չենք համարում մեջ բերել Ադոնցի նոյն տեղում (307) հիշած նոյնքան անհաջող յերկու ուրիշ ստուգաբանություններն ել:—Կամենալով հաստատել թե Բագրեվանդը պետք է լինի Բագրատունիների նախնին քննակալը, դիմում ե Բագրեվանդ անվան ստուգաբանության յեզվ գրում ե:—«հիմք կա նոյն իսկ յենթադրել, թե Բագրատունիները հնուց իվեր քնակում եյին այս տեղերը յեզվ յեթե քնդունենք Բագրատ (հիշող՝ Բագարատ) յեզվ Բագրա-վանդի միջով եզած կապը, այն ժամանակ Բագրեվանդը յերեվան ե գալիս իբր նախնագոյն տոհմային գավառը Բագրատունիների»: Այս կապը ծանոթություն մեջ տալիս ե այսպես:—«Bagrat-vanda-ից vanda հնագոյն ձևվն ե gund բառին՝ ի միջի այլոց ժոռ (տուն) նշանակությունը: Հմտել վանդ-ակ: Թեոփիլակսի մոտ կա Վենդոսաբորոն, վորը գիտուններ նոյնացնում են gunde—sapur(=Գունդե-Շապուր) բաղաբին»: Nöldeke, Tabari, ի. 41:

Հեղինակը չի բացատրում, թե Բագարատ-ից ինչպես ստացվեցավ «Բագրե» ձևվը. երկրորդ՝ թե ինչ կապ կա իր գտած վանդ-ի յեզվ վանդակ բառերի միջով, դարձյալ մնում ե խնդրական: Այստեղ միայն մի բան պարզ ե... հեղինակը կամենում ե, վոր այսպես լինի յեզվ ուրիշ վոչին: Marquart (Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation) Բագրեվանդն ստուգաբանում ե այսպես... «Իրանական են նպատից (Ալա-դադ) դեպի հիւսիս գտնվող Բագրեվանդ գավառի յեզվ նրա հին կեդրոն Բագավանի անունները... Բագավանն, այսինքն Բագա-ի ավանը (հին պրսկ. bagavana) պարսիկների ժամանակ Միթրի (=Միհրի) պաշտամունքի տեղն եր, վորն այստեղ (պարզեվատու) անունով պաշտվում եր, ինչպես եր յեզվ պարսիկների մոտ: Այս անունը հայերի կողմից՝ իմաստին համապատասխան՝ վերակոչվեցավ Վանդաբորոն անունով»:

Գավառի անունն ել սակայն կապված ե Միթրայի հետ... revand—րեվանդ, ավետ. raevant անունը նշանակում ե (հարուստ, փառավոր): Ուստի պարզ ե, վոր այս նախապես մակդիրն եր (պարզեվատու) Բագաին (=Միթրա=Միհրին): Ըստ այսմ Բագրեվանդ՝ հին պրսկ. bagahja ravandah (սեռ.) նշանակում ե (հարուստ պարզեվատուն) իբր մակդիր Միթրա-ին յեզվ համապատասխան ե Reōmithres անձնանունին=հն. պրսկ. raiva—mithra՝ հարուստ Միթրան (իբր բարեկամ ունեցող): եջ 20:

Գունդե-Շապուր անունն ել միանգամայն սխալ ստուգաբանված ե. «gund» չի նշանակում ժոռ (տուն), ինչպես տալիս ե Ադոնց, այլ ամփոփում ե «Վեհ-Անտիոք—Շապուրի»: Մարբուարտ (Eransvahr, 27) այսպես ե բացատրում այս անունը: «Խուժաստանում կար-Beth Huzaje... վոր Շապուր Ա-ի կողմից կոչվեցավ Weh Antiok—i sahpuhr=gundi sapur. իսկ եջ 145 գրում ե. «Beth Lapat դեռ 410-ին ավտոանիստն եր Beth Huzaje

Ադոնցի վոչ տեղադրական և վոչ ել ստուգաբանական բացատրությունները, ինչպես տեսանք, վոչ մի կերպով չեն նպաստում առաջադրված խնդրի լուծմանը. ուստի դիմենք Պրոկոպիոս և այնպես կարծում ենք, նրա տված մանրամասնությունները թերևս հնարավոր դարձնեն դոնե մոտավորապես ճշտել վոսկեսիանքերի տեղը:—

Նախ ծանոթանանք պատմչի տված տեղեկությունների հետ, վորոնք ահավաստի:—

1) «Նոյն ժամանակում (530-ին) հոռոմները նույնպես պահանջեցին պարսկական մի քանի բերդեր պարսկահայքում, ¹⁰⁾ վորոնք են Բոլոնի բերդը և Փոտանգիոն անվանված բերդը, վորն այն տեղումն ե. ուր պարսիկներ վոսկի յեն հանում, վորը տանում են արքային»: (Պրոկոպ, I. XV. 18):

2) Ներսես Կամսարականը հոռոմների կողմի անցնելուց հետո՝ իր կրտսեր եղբայրն ել՝ Բասակ հետևում ե նրան «նախ դադարաբար բանակցություն մտնելով հոռոմների հետ և նրանց հանձնելով Բուլոն բերդը, վորը շատ մոտ եր գտնվում Թեոդոսիոպոլսի սահմանին»:

Վորովհետև նա կարգադրեց, վոր զինվորները պահվալին մերձակա մի տեղում և զիշերն ընդունեց նրանց բերդում՝ բանալով նրանց համար մի փոքրիկ դուռ: (ն. տ. 32):

3) Խոսքով պարսից արքան պահանջում ե, թե «Հոռոմներն իրեն պետք ե վերադարձնեն Փառանգիոն յեզվ Բուլոն բերդերը»: (I. XXII. 3):

4) Յերբ 532-ին Խոսքով ու Հուստինյան կայսրն այսպես կոչված «մշտապես խաղաղություն» դաշն կնքում եյին, «հոռոմները վերադարձնում են

-ի մետրոպոլիտին: Այս սյուրիական անունն ե Շապուր Բ-ի (պետք ե լինի Ա) հիմնած Weh Antiok Sahpuhr (=Շապուրի Անտիոքը վեհ (ե)), ուր գետնովեցան Անտիոքից բերված բնակիչները: Խուդայի նամակի հնագույն արաբ վերամշակողները այնպես չեյին հասկանում այս բարդ անվան կազմությունը յեզվ ընդունում եյին իբր «Բիհ ազ Անտիո Սաբուր» այսինքն Անտիոքից ավելի լավ ե Շապուրի (բաղարը): Նոյն այս անունը աս վաղուց ամփոփվեցավ Wandī—Sapur ձևով. Թեոփիլի մոտ. Bendosaboron (=Վենդոսաբորոն) ե նաեվ Gundi—Sapur. արաբ. Ջենախաբուր: Այս բացատրությունից պարզվում ե, թե վոչ մի կապ կամ համեմատություն կա հայ վանդ, վանդ-ակ-ի յեզվ այստեղ հիշված պարսիկ Wand կամ gund բառերի միջով:

Այս վերլուծումը մեզի մի բան ել ասում, թե պատմական մի անուն ստուգաբանելու համար բավական չե մատնանշել մի երկու տառերի նմանությունը. այլ ուրիշ շատ պայմաններ ել կան, վորոնք անհրաժեշտ են ուղիղ մի բան ասելու յեզվ մի խնդիր լուծելու համար:

¹⁰⁾ Պրոկոպ «Պարսկահայք» (=պարսից Հայաստան) ասելով հասկանում ե միայն պարսկական բաժնի Հայաստանը, վորը բնավ կապ չունի հայ մատենագիրների հիշած «Պարսկահայք» նահանգին հետ: Իսկ հոռոմների բաժնի Հայաստանը միայն՝ անվանում ե «Արմենիա»:

պարսիկներին յերկու բերդերը՝ Փառանգիրն և Բոլոն (խոստացված) դրամովը միասին»։ (Ն. ա. 18)։

5) «Այս ազգի (Ծանի) սահմաններից մյուս կողմը կա մի խորանոթ (canon) վորու յերկու կողմերը բարձր են յեվ չափագանց գառիքափ բարձրվելով հեռուն միջեվ կովկասյան լեռները։ Նրանում կային բազմամարդ քաղաքներ, խաղող և ուրիշ պտուղներ շատ առատությամբ բուսնում են։ Յեվ այս ձորը շուրջ յերեք օրվա ճամբա հարկատու չի հոռոմներին. սակայն նրանից անդին սկսվում և Պարսկահայքի յերկիրը և այս **սեղումն** և վոսկու հանքը, վոր Կավատի (պարսից արքայի) հրամանով մշակում և բնիկներից Սիմեոն անուն (հայ) մեկը։ Այս Սիմեոնը, յերբ տեսավ, թե յերկու աղբերը (պարսիկ ու հոռոմ) բուռն պատերազմի յեն բռնվել, խորհեցավ Կավատը զրկել իր յեկամուտից. ուստի հոռոմներին հանձնեց իրեն ու Փառանգիրն, բայց մերժեց հանձնել հանքի վոսկին։ Յեվ հոռոմներն ել վոչ մի բան չարին խորհելով՝ թե իրենց համար բավական և, վոր սրանով թշնամին զրկվում և իր յեկամուտից, իսկ պարսիկները չեյին կարող հոռոմների կամքին հակառակ բռնադատել նույն տեղի բնակիչներին համակերպելու, վորովհետև նրանք հետ եյին մղվում տեղին դժվարություն պատճառով»։ (I. XV. 26—29)։

6) Բոաս (Boas) (= Կոհ = ձորոխ) բղխում և Պանի յերկրից՝ շատ մոտիկ այն հայերի միջից, վորոնք բնակում են Փառանգիրնի շուրջ»։ (II. XXIX. 14)։

Արդ այս տեղեկություններից նախ՝ հետևում և, թե վոսկու հանքերը գտնվում էին սահմանի վրա Փառանգիրնի յեվ Բոլոն կամ Բոլոն բերդերին շուրջ մոտ մի սեղում. յերկրորդ՝ այս բերդերը մոտ էին Թեոդոսիոպոլսի = Կարինի սահմանին. յերրորդ՝ ձորոխը բղխում և Փառանգիրն բերդին մոտակա մի սեղից, վորու բնակչությունը հայ էր. չորրորդ՝ այս յերկու բերդերը գտնվելով հանդերձ պարսիկ բաժնի Հայաստանում՝ շատ մոտ էին հոռոմների սահմանին յեվ այս պահանջով ել հաճախ ձեռքից ձեռք էյին անցնում. հինգերորդ՝ սահմանի վրա կար խոր մի ձոր՝ ուղղված դեպի կովկաս լեռները և ուներ բազմամարդ քաղաքներ և շատ պտղառատ մի յերկիր էր. այս ձորի մի մասը միայն հոռոմներից էր պատկանում. վեցերորդ՝ վոսկի հանքի մեակությունը հանձնված էր բնիկներից, վորոնք հայ էին։

Այստեղ մեզի համար կարևոր և ճշտել բաժնված Հայաստանի հոռոմ — պարսիկ սահմանագիծը։ Առանց մանրամասնությունների մեջ մտնելու առհասարակ, թե Կարին և Շասգում կամ Շաղագում (այժմ Ուլաջը) հոռոմներին էյին, իսկ Բասեն ու Վոֆաղ, Ոքաղ (Տալքում)՝ պարսիկներին։

Սրանց միջև բնական սահմանագիծն են կազմում, վորոն հետևում էր և քաղաքականը, նոր անուններով — արեվելից (Կարինի) Բասեն գետի (Մուրց) և Ֆեփրափ ջրաբաշի՝ Դեփե-Բոլուն — Ֆիրեջի — Ղարաբազար կամ Ջորան-Դեղե լեռնաշղթայի կատարները։ Կարինի ելուստից Թորբում վսակի և Ֆեփրատի մի կողմից, իսկ մյուս կողմից՝ առաջինի և վերին

ձորոխի ջրաբաշի լեռները։ Ղարաբազարի հյուսիս-արևմտյան ծայրը բաժանվում և Ֆեփրատի տեղադրյալը Մաշափայտից Գյուրջու-Բոլաղ (վրացական կիրճ, վորովհետև այս լեռնանցքն առաջնորդում և դեպի Վրաստան) կիրճովը, վորի՝ Մաշափայտին կից բարձրությունը կոչվում և **Ջարել** և Մաշափայտի գանգվածի հետ կոչվում և ընդհանուր անունով **Գյավուր-գաղ** (Քրիստոնեյի լեռ). սրա բարձրագույն գագաթն և **Գուլե-Գուլեյար**¹¹⁾

¹¹⁾ Գուլե-Գուլեյարի գագաթից (3100 մետր ծովից) շատ անգամ մի հափշտակիչ զմայլումով դիտել եմ այն հմայիչ ու վեհաշուր համայնատեսարանը իր ընդարձակ հեռավորով, վորն ամեն ուղղությամբ տարածվում և շատ հեռուն։ Պարզ յեղանակին, վոր հաճախ ունի մեր յերկիրն մանավանդ ամրան, նույն իսկ առանց դիտակի տեսնվում են Սուկավետ՝ (Քյոսա-Դաղ) Բագրեվանդի արեվմտյան կողմը, Սիփան, Բիջան, Բյուրակըն (Բին-Գյոլ), Մաշ ու Մարխար (Քղի, Դերջան), Մերջան, Կոփ. իսկ հյուսիսից Պարխար կամ Մաղտիքի (Լազտանի) լեռնապարր կեցած և պարսպանով գագաթներով, վորոնց բարձրագույնն և խոտքերի վերել վերջնաբակ՝ միշտ ծածկված ձյունի հսկա շերտերով յեվ հեռու հյուսիս-արևելքի հորիզոնի վրա յերևում և Անարայի լեռնաստանը։ Արեվելքից միայն հորիզոնը փակված և Ղարաբազարի լեռնակույտովը։

Գագաթը դյուրամատչելի չի հարավից՝ Բդաձոր գյուղի կողմից յեվ Մաշափայտից. ամբողջ լեռը մինչև կատարը ծածկված և պարարտ արոտով յեվ առատ ծաղիկներով. մասնավորաբար առատ են կարմիր մեխակ, մանիշակ (պանսե) յեվ անմոռուկ, վոր միշտ կարելի չի գտնել ձյունի յեզրին ըստած։ Հյուսիսի խորությունների մեջ ձյունը տարին բոլոր չի պակասում։ Կատարի հյուսիս-արևելյան կողմը յենթակա չի փլուզում, վորից գոյացել և աճագին մի խորխորատ։ Կատարը ծածկված և սալանով մաշված բարակույտով՝ ուղղված դեպի հարավ. այս բարակույտի սառցաբեր (մոռեն) լինելը տեսնվում և շատ վորոշ։ Բարակույտի բռնած ուղղությունը յեվ նրանց տեսակը, վոր տեղականի հետ նույնը չեն, հաստատում և այս բանը։ Շատ ավելի մի բարձր գագաթից բշվել են այստեղ առույցի հետ այս սալաբարերը, վորն ապա փլել և, յեվ սրա հաստատ ապացույցներն են այն յերկու լեռները, վորոնք գոյացել են նրա խոռոչներում։ Փլուզումը կատարվել և արեվելքի կողմում՝ Թորթումի ձորագլխում յեվ հյուսիսարևմուտք՝ Մերջան գետահովիտի գլխից. այնտեղ գոյացած լեռնից ել գետն առնում և իր սկիզբը՝ Սրբիլի վտակը։ Արեվելյան կողմի լեռը սակավաջուր յեվ գոց և, այժմ նրանից ջուր դուրս չի գալ, թեպետ վորոշ նշաններով հաստատվում և, թե ժամանակին Թորթումի գետի ակնադրյուններից մեկն և յեղել։ Սրանում ծուկ չկա. իսկ մյուսն ունի առատ կարմրախայտ ու սևվախայտ՝ զեղարքունու տեսակից, վորոնք ամարանոցից հաճախ մեզի հրապուրում էյին ձկնորսական արշավանքներ կատարել այստեղ։ Այս լեռները նշանակված չեն ինձի ծանոթ վոսկի բարտեզի վրա։

Գաղաթի հիւսիսից երկարում է մի թե՛ կապելու համար այս լեռնակոյսը ուրիշ մի մեծ լեռնաշարքի՝ Զիարեթ-Ղազաբաթի-Մեղրաբուն-Հարկե-վու, վորոնք աղեղնաձև դառում են հարավից, հարավ-արևմուտքից և արև-մուտքից թորթում գետի ավազանը նախ Եփրատի Սերջևմ վտակից (Ովա-ջըզ) և ապա վերին ձորոթի ավազանից:

Արդարև այս սահմանագիծն այնքան բնական է, վոր Գուշ-Գուշլար գաղաթից (3100 մետր ծովից) տեսնվում է թորթում գետի ամբողջ ավա-զանը շատ հասու կերպով դառնալով Ովաջուքից և բուն ձորոթի ձորից, մինչև թորթում գետի Ոլթի գետին խառնվելը: Այս պատճառով լեռնա-գրայի կասարներից ուրեմն անցնում եր հոռում-պարսիկ սահմանա-գիծը և ձորոթի ձորը հավանորեն մինչև Ոլթի գետի բերանը հոռոմներին եր պատկանում:

Պատմական տեղեկություններն ել դալիս են հաստատելու այս բնա-կան սահմանագիծը՝ քաղաքականին հետ նույն և մի լինելը: Փարպեցին գրում է—« Եւ երթեալ (Հաղարաւուխտ) յՈրադն՝ բնակէր մօտ ի գիւղն, որում անուն էր Գիւղիկ և միւսումն Վարդաշէն (այժմ նույն անունով մնում է), և բանակեալ անդ զօրն զայն, լսէր ի վաղիւն, թե Մամիկոնեան Վահան մօտ է ի Գա ի Վարայր Վարայր ի հոռոմ տան, ի գաւառին, որ կոչի Շաղագում... Հուեալ յՈրադայ իջանէր ի գաւառն Բասենոյ և բանա-կէր մօտ ի գիւղն, որ անունն էր Դու, (այժմ Թուշ) ի գաղտին աղբերականց, զոր Արծաթ աղբերան կոչեն: (Ղ. Փարպ. աղ. Վննակի. 443):

Այժմ արդեն ճշտված է, թե Որադ՝ Տայքի գավառներից մին գտնվում էր թորթում գետի վերին հոսանքի և ակնադրյուրի շրջանում՝ Գեալուր-Դաղի լեռնակույսի հիւսիսային գոտիվայրերից սկսած մինչև Վիսիկ վտակի բերանը և իր տարածության մեջ ունի ներկա Նիխախ, թորթումի բերդը, Սաղեր, Զինավոր, Կարսիկ, խոտորիկ, Նորչեն, Վարդաշեն, Քարնքոս, Քսխա, Սախո և այլն գիւղերը: Իսկ Շաղագումը կամ Շաղագում ներկա Ովա-ճըքն է՝ Սերջևմի գետի վերին և միջին հոսանքի վրա. Ղազաբ-Բաթի լեռն գրքան գտնում է այս լեռկու գավառները:

Այս գիտազարից շատ հասու սահմանագծերով յերեվում են այս լեռնաստանում գետեղված հետեվյալ գավառները կամ հիվիտները—արե-վելքից Բասենի հովիտը մինչև Վանանդու լեռներն ու Սուկավետը, հարա-վից Կարնի դաշտը մինչև Աշկալն ու Կոփ տարածվում են այս շղթայի հարավային ստորոտում, արեւմուտքից Ովաջրք (Շատգումը) յեվ վերին ձորոթի հովիտը (Սաղեր), իսկ հյուսիսարեւելքից թորթում գետի ավա-զանը մինչև խաղաթի լեռները: Այս ընդարձակ համատեղարանը վայե-լին եր պատճառը, վոր Կարնի Սանասարյան վարժարանի սաներն իրենց ամարանոց Սրտածորից (նույն գաղաթի ձորերից մեկը) ամեն տա-րի զբոսարշավներ ելին կատարում խաչափայտ-Գուշ-Գուշլար, վոչ միայն վայելելու այս հմայիչ տեսարանը, այլեւ տեղին վրա հայրենագիտա-կան ծանոթություններ ստանալու:

Այս տեղադրական նկարագրությունից հետևում է թե Փառանգիոն և Բուրն կամ Բուդ-ոն¹²⁾ բերդերը պետք է փնտռել թորթում գետի ավա-զանի արեւմտյան կողմի ջրարաշխ՝ Մեղրաբուն և Հարկեվոր լեռներում ձորոթի գետի ակնադրյուրի շրջանից վոչ հեռու: Զորոթի իր սկիզբն է առ-նում Ղազաբ-Բաթի լեռների արեւմտյան ծործորներից՝ վոչ հեռու Գա-րա-Ղաշա գյուղից, այս լեռան արեւելյան կողմից քամվում է Վիսիկ վտա-կը՝ թորթում գետի ձախ կողմի բազուկներից մեկը. ուստի Փառանգիոն և Բուրն գուցե բերդերը պետք է գտնվելին Վիսիկ վտակի ավա-զանի՝ հավանաբար վերին կողմերը,՝ ներկա Սախո և Վիսիկ գյուղերի շրջաններում, վորը և «հեռու չէ թեոդոսիոպոլի (=Կարնի) սահմանն րից»:

Պրոկոպի հիշած՝ խաղաղով և բազմատեսակ արտադրությամբ հարուստ խորածորը, վորում վերին մասը մինչև յերեք որվա ճամբա հոռոմներին եր պատկանում, անտարակույս ձորոթի ձորն է և շատ իրավամբ հեղինակը շատ զառիթափ կողերով ձոր և անվանում է վոչ հովիտ: Ով յեղել է ձո-րոթի ձորում, կարող է վկայել, թե հույն պատմիչն վորքան ճիշտ բնու-թագրել է: Այս հորդաշուր մեծ գետի յերկու կողմերից հաղթվ բարակ արա-հետներ միայն կան, վորոնց վրա ուղևորը մազլցելով կարող է վեր-վար յերթեկել: Նույնպես ճիշտ է Պրոկոպի ասածը խաղաղի առատության և պտուղների բազմատեսակության համար: Հակոբ Կարնեցին այսպես և նկարագրում ձորոթի ձորը.—«Եւ անտի (Բարեբղ) հատան է ի ձորն մեծ և անհուն, որ ունի զղեակ մի պարսպաւոր շինեալ ի վերայ ձորոթի գե-տոյն որ այժմ Ըսպեր ասեն. և է սա պարոնանիստ, և ունի գիւղս և Մաղ-

¹²⁾ Պրոկոպի Bol-on=Բուդ-ոն=Բուդ-ոն անունը նույն ինքն Փարպե-ցու հիշած Բուդն է, վորի on վերջավորությունը հունական մի հավելված է: Փարպեցին Բուդ բերդը դնում է Բասենում.— «Իսկ Շաղագոյ տարեալ զկա-նայս Կամսարականացն յամուր բերդն Բասենոյ, զոր Բուդ բերդն կոչեն՝ անդ թողոյր»: (եջ 447. նույնը կրկնում է 478): Մինչդեռ Պրոկոպի տված տեղեկություններից հայտնի չէ, ինչպես տեսանք, թե Տայքում պետք է լինի յեվ վոչ թե Բասենում: Պետք է ավելացնել նայել թե Բասենումն ել հայտնի չէ Բուդ բերդի տեղը: 2. Ղ. Սիւսան գրում է.— Ընդ անձա-նօթ բերդին Կապետու, զոր յիշեցաքս, յիշեցուք միւս եւս նոյնպէս անձանօթացեալ զիւմ և անուամբ, որ և ի սոյն կողմանս թուի լի-նել, այն է Բուդ բերդ, զոր ամուր բերդն Բասենոյ կոչէ Ղազար Փարպե-ցի... առաւ ընդ Դուի եւ սահմանակցութեան Կարնոյ եւ թորթումայ ի անջս լերանց, որ հային ի դաշան Բասենոյ՝ ի դէպ է խնդրել զբերդն: (Այրարատ. 18)

Արդյոք Փարպեցին սխալվում է դնելով Բուդ բերդը Բասենում, թե նույն անունով յերկու բերդեր կային մին Տայքում, մյուսը՝ Բասենում. Ե նշան կային յերկու Արծաթի, մին Կարնի դաշտի հյուսիս-արեւելյան Դոդմը, իսկ մյուսը՝ Արծաթ-Աղբերք Բասենում Դու գյուղի մոտ:

բայս ԳՃ. (= 300) և վայրիս յոլով. է և ձորն այգիք անթիւ և ծառոյ պտուղք յոլով հոտով և համով: Եւ բնակիչք երկրին ըսվանդակ հայք, որ գնացեալ հասանք մինչև խալիզն Խոտեջուր»⁽³⁶⁾

Այժմ իսկ յերկրի կիսավեր վիճակում, յերբ այգիների ու պարտեզների բազմաթիվ ավերակների մնացորդները միայն տեսնվում են զատի-թավերի վրա, ձորը դարձյալ հարուստ և բազմատեսակ պտուղներով մանավանդ Խոտեջուր: Նույն ձորում հանդիպել եմ շատ համեղաճաշակ ու բուր-լից խաղողի՝ վայրի վիճակում: Արդ կարելի չի հետևյալ, թե Փառան-դեոն և Բողոն բերքերը մոտ ելին և Ապերին: Արդյոք կարելի՞ չի Վիսիկ գետահովտում այժմ գոյություն ունեցող Բարդոզու և Բուլուլ (բոս Հ. Սարգսյանի քարտեզի) գյուղերի անուններում վերագտնել մեզ հետաքր-քող բերքերի անունները: Տեղին վրա կատարվելիք մի ուսումնասիրու-թյուն պիտի տա այս հարցին գոհացուցիչ մի պատասխան:

Տեղագրական այս պրպտումը թերևս նպաստե լուսաբանելու պատմա-կան մի կետ եւ: Փարպեցին հաղորդում է, թե Վահան Մամիկոնյան իր գործունեությունը առաջին շրջանում պարսից Պերոզ արքայի կողմից նշա-նակված էր իր «վոսկեհատ» ցարդ պարզված չէ, թե այստեղ «վոսկե-հատ» բառն ինչ նշանակություն ունի. արդյոք վոսկի հատանով, կործող, այսինքն վոսկի հանք շահագործող, թե վոսկու տուրք հավաքող, ինչպես կարող է կարծվել կամ թե վոսկեհատ, ինչպես դարեհատ (Վոսկեհատ Անա-հիտ): Թեպետ յերկու դեպքում էլ նույն «հատ» արմատն է. բայց արմատն և նրանից ածանցված բայն ու գոյականը տարբեր իմաստով են պո-ծածվում: «Նոր Հայկազյան Բառարանը» տալիս է «վոսկեհատ=վոսկեհանք, վոսկեհանություն և նշանակում» և իրր վկայություն մեջ է բերում Փար-պեցու միակ խոսքը. «ի գործ ոսկեհատին չեա ինձ մօտ երթալ»: Մենք ևս բնորոշում ենք այս բացատրությունը. բայց նախ պետք է հաստատել, թե իրավունք ունինք այսպես հասկնալու: Վոսկեհատը վոսկեհանք ու վոսկե-հանություն նշանակելու համար պետք է, վոր Հայաստանում և այն էլ նույն միջոցին պարսկական բաժնում մի վոսկի հանք գոյություն ունենար, վորպեսզի Վահանին հանձնվեր վոսկեհանություն գործը⁽³⁷⁾ Այս խնդիրն արդեն լուծվեցավ մեր նախընթաց քննությունը: Մեր մատենագիրներն, նոյն իսկ Փարպեցի, վորը Վահանի վերաբերմամբ ուրիշ շատ մանրամաս-նությունների մեջ է մտնում, բնավ վոսկե հիշատակություն չունին այս-պիսի վոսկի հանքի գոյություն մասին, մինչդեռ Պրոկոպի վկայությունը,

13) Փարպեցին Այրարատի դաշտը նկարագրած ժամանակ շատ անո-րոշ ու մութ ակնարկություն և անում վոսկեհանքի գոյություն մասին նայելով Այրարատում՝ թեպետ առանց տեղագրական վոյնվե ցուցումի. «իսկ դաշտացն ամենալրուծյուն զկամս աշխատասիրացն կորզելով... զառ քնդ երկուս ծածկեալ օգուսն ուսուցանեն գանձել զշահս, յիվ զվայելս այսր աշխարհիս ի մեծություն թագաւորաց յիվ ի հաստատու-թիւն հարկահանաց գոսկի»:

ինչպես տեսանք, այնքան բացահայտ և ու մանրամասն, վոր այլևս վոչ մեկ տարակույսի տեղիք է մնում այս մասին: Պրոկոպն առում է, թե Փա-ռանգիոն և Բողոն բերքերի մօտ կար վոսկեհանք, վորն իր ժամանակ շահագործում էր Սիմեոն անունով մի հայ: Տեսանք նույնպես թե այս բեր-քերը՝ մեր կարծիքով պետք է գտնվեյին Տայքի Ոքաղ գավառում. իսկ Տայք, նույնպես գիտենք, Մամիկոնյանների կալվածն էր. արդ սրանից կարելի՞ է հետևյալ, թե Վահանի հանձնված վոսկեհանք Փառանգիոնի յիվ Բողոնի վոսկեհանքն էր: Մենք գրականորեն ենք պատասխանում այս հարցումին, և ահա, թե ինչու: Նախ՝ տեսենք, թե Փարպեցին ինչ է ասում. «Վրիւ ասորի... լինէր ամբաստան զՎահանայ առաջի թագաւորին Պերոզի՝ ասելով թէ ինձ ի գործ ոսկեհատին չեա ինչ մօտ երթալ, և զիւր ժողովեալ զամենայն գոսկի աշխարհին՝ խորհի երթալ առ կայսր և կամ յաշխարհն հոնաց և տուեալ գոսկին, կամ ի խնդրել գունդ և ապստամբել»: Վահան լսելով իր մասին եղած ամբաստանութունը՝ առանց սպասելու վոր իրեն կանչեն, գնում և Պարսկաստան, իրեն հետ տանելով ամբողջ վոսկին. — «Իմաստնախոհին Վահանայ առեալ վոսկեհատի զբաղմութիւն ոսկույն և հասանէր ի դուռն: Եւ լուեալ (Պերոզի) զՎահանայ և զքանիօնություն բազմության ոսկույն, գոր բերեալ էր, և ուրախանայր յոյժ»:

Հարցութեամբ միջոցին Վահան պատասխանում է. «Բայց եթէ նեղ ինչ էր ինձ ի ձէնջ, և ուրեք յօտար երկիր գնալ և կորնչել կամէի, դառնալի ոսկի այսօր (այսր?) զի՞ բերէի, որ մինչև ցմահ իմ, թէ և կարի շատ կէի, իմում անձինս, այլ և տառանց ևս ընդ իս թոշակ շատ էր և բաւական. և գոյլ ոք ոստիկան՝ ձեր յիմ վերայ չէր կացուցեալ, որ թե ինչ իհարկէ տայր բերել այսօր զայդչափ բազմութիւն ոսկույն» (Ղ. Փրպ. կե. 355—57):

Այս հատվածից երևում է թե այստեղ խոսքը վոսկի հանքի մասին է, յեթե «զիւր ժողովեալ զամենայն ոսկի աշխարհին» խոսքը լոկ մի բնորոշ-րացում համարինք և վոչ թե իր բառացի իմաստովն առնենք: Վրիւ Ասորին նախանձարեկ՝ Վահանի ձեռքումը յեղած վոսկեհանքի պատճառով, վորից ինքը չէր կարող մի բաժին կորզել, զի Վահան «չեա ինչ նմա ի գործ վոսկեհատին՝ մօտ երթալ», Պերոզին և զիմում՝ ամբաստանելով Վա-հանը քաղաքական տեսակետով: Վոսկու քանակը շատ մեծ է յերևում: Վորովհետեւ նախ՝ Պերոզ լսելով «գանձիօնութիւն բազմության ոսկույն... ուրախանայր յոյժ». յերկրորդ՝ Վահան ինքն էլ հաստատում է վոսկու շատ լինելը՝ «զայդչափ ոսկի այսօր զի՞ բերէի, որ մինչև ցմահ իմ, թէ և կարի շատ կէի, իմում անձինս, այլ և տառանց ևս ընդ իս թոշակ շատ էր և բա-ւական», և յերրորդ՝ հոնքից գունդ բերելու և ապստամբելու համարձեցոյն-պես շատ մեծ գումար պետք էր. «և տուեալ գոսկին կամ ի խնդրել գունդ և ապստամբել»: Արդ այս վկայությունները, այնպես ենք կարծում, բա-ւական են հաստատելու, թե «այդչափ բազմության ոսկույն» հանքից մի-այն կարող էր ձեռք բերվել և վոչ հարկահանությունը:

Վահանի ժամանակից (Վահան սպրած պիտի լինի մինչև Ե. դարուն վերջը), (Պերոզ 459—484) հազիվ մի հիսնամյակ հետո՝ կավատի օրով

(188—531) Միմեոն անուն մի հայ շահագործում է Փառանգիրն ընդդիմադրած վոսկու հանքը: Կավատի և Հուստինյանոս կայսրի իրարու դեմ մղած պատերազմի միջոցում նույն Միմեոն՝ առնելով իր մոտ գտնված վոսկին՝ անցնում է հոռոմների կողմ և այսպիսով գրկում է Կավատն իր յեկամուտից: Իսկ Փառանգիրն, ինչպես հաստատեցինք, պետք է գտնվեր Տայք, Մամիկոնյանների կալվածում: Վահանի և Միմեոնի հսկողությունը տակ մշակված վոսկեհանքը միևնույնը լինելու չէ, և Վրիս ասորու Վահանին վերագրած մտադրությունը գործադրել և Միմեոնը մի հիմնամյակ վերջը, այսինքն՝ առնելով վոսկին անցել և հոռոմների կողմ: Այսպես ուրեմն Ե. յեվ Զ. դարերում Տայքի մեջ շահագործվում եր մի վոսկու հանք, վոսկու վերակացությունը Պերոգի որով հանձնված եր Վահանին, իսկ Կավատի ժամանակ՝ Միմեոնին՝ քերեվս ցուցադես մի Մամիկոնյան:

Վրիս ասորին չէր միայն, վոր վոսկեհանքը ձեռք բերելու համար գիմում և ստոր միջոցներ: այլ հետազայում ուրիշ շատ հայեր իրար մատնում ու սպանում էին այս տեղերին տիրելու համար: Պրոկոպ խիստ հետաքրքրական ու միևնույն ժամանակ տխուր մանրամասնություններ և տալիս այս մասին իր՝ «Պարսկական պատերազմ, գրքի II, գլ. III-ի մեջ, վորն ամփոփելով մեջ բերելը կարևոր ենք համարում թե իբր պատմական մանրամասնություն ժամանակի պեպքերի և հայ նախարարների նկարագրի և թե մանավանդ տեղական ինչ ինչ կետեր ավելի ճշտորոշելու նպատակով:—

Նույն Միմեոնը, հաղորդում է պատմիչը, վոր Փառանգիրն հոռոմների կայսր Հուստինյանոսին հանձնեց, համոզեց կայսրին, վորովհետև պատերազմը տակավին բուռն կերպով շարունակվում էր, իրեն պարգևելու (հոռմեական) Հայաստանում մի քանի գյուղեր: Տիրելով գյուղերին՝ նա սպանվում և նրանց նախկին տերերի ձեռքով:... Սրանք Պերոգի¹⁴⁾ յերկու վորդերն են, վորոնք քախան Պարսկաստան: Յերբ կայսրն իմացավ այս բանը, գյուղերը ավալ Միմեոնի եղբորվորդի (Հ. Չամչ. ունի քեռորդի) Համագասպին և վորին նշանակեց Հայաստանի կառավարի: Համագասպ կայսրին մատնվեցավ իր բարեկամ Ակակիոսի (նույնպես հայ) միջոցով, այն ամբաստանությունը, թե չարչարում է հայերին և կամենում է պարսիկներին հանձնել թեոդոսիոսյան և ուրիշ բերդեր: Այս ասելուց հետո՝ Ակակիոս կայսրի հրամանով զավաղությունը սպանում և Համագասպին և իրեն համար ապահովում և Հայաստանի հրամանատարությունը՝ կայսրի պարգևով միասին: Բայց ստոր նկարագրի տեր լինելով՝ խիստ առնջում է հպատակ հայերին և ծանր տուրքեր և պահանջում նրանցից: Հայերը չկարողանալով վճարել այս անտանելի տուրքերը՝ սպանում են Ակակիոսին և ապաստանում Փառանգիրն:

¹⁴⁾ Հ. Չամչյան (Պատմ. Հայոց. հտ. ք. 241) ասում է.— «Եւ ապա ի թշնամություն գրգռեալ ընդ երկու իշխանս հայոց, որք էին որդիք Վարազայ ուրումն»: Թե ինչու Պերոգի փոխանակ Վարազ և անվանում սպանիչների հորը, չենք հասկանում:

Հայերի այս ապստամբությունը զսպելու համար կայսրը նշանակում է հայտնի զորավար Միտաս կամ Ծիտասին, վորը նախ խոստումներով իր կողմն է շահում Ասպեսյան կոչված ցեղը՝ մեծ իր ուժովն ու թվովը, վորոնք խոստանում են կովի միջոցին Միտասի կողմն անցնել այն պայմանով, վոր առանց պատի լեցրակվելու՝ գարնալ տիեզ իրենց կալվածներին ու վալեյն ցախկին իրավունքները: Միտասը գրավոր ընդունում է այս առաջարկը, և այլևս բոլորովին վստահ իր հաղթության, իր ամբողջ զորքով առաջ է խաղում մինչև հայերի բանակեացը¹⁵⁾ Oinoxalakon Ոյնոխալակոն (Ունոքաղաք?) կոչված տեղը: Սակայն հոռոմներն՝ հակառակ իրենց խոստման և ստորագրած պայմանագրին, չարաչար սպանում են իրենց ձեռքն ընկած հայերին և մինչև իսկ Միտաս ինք՝ իր ձեռքն ընկած Ասպեսյանների կիներն ու ռզամ մի բակ լեցնելով բոլորի ել սպանում է:

Պատերազմն սկսվում է. յերկու բանակներն էլ գտնվում են գծվառագնաց մի յերկրամասի վրա, ուր կային շատ գահավեժ հեղեղահներ յեվ միահամուռ կովի մզել կաբելի չեռ. այլ ցրված էյին առապարների յեվ հեղեղահների մեջ: Այսպիսի մի հեղեղատում Արշակունի Հովհաննեսի վորդի Արտավան հանդիպելով Միտասին սպանում է:

Կայսրը Միտասի տեղ նշանակում է Բուզեսին, վորը նախ պատվիրակ է ուղարկում հայերին, վորպեսզի իրենցից մի քանի գլխավորներ գան և առանց կովի համաձայնին ու հաշտություն կնքեն: Թեպետ հայերը չեն վստահանում Բուզեսի խոսքերին, սակայն Արշակունին Հովհաննես, վոր նրա անձնական բարեկամն էր, ընդունում է հրավերը և իր հետն առնելով իր փեսա Վասակ և ուրիշ հետևորդներ գնում է: Ծանապարհին հասնում են մի տեղ, ուր պետք է գիշերեյին և հետևյալ որը ներկայանային Բուզասին. և հանկարծ շրջապատվում են հոռոմ զինվորներով: Վասակն առաջարկում է ու պնդում հետ դառնալ, բայց Հովհաննեսը չի համաձայնում. Վասակ տեսնելով թե իր պնդումներն ոգուտ չունեն, ինքն իր հետևորդներով ձեղքում է պաշարման շղթան ու անցնում. իսկ Հովհաննես միայնակ ընկնելով Բուզասի ձեռք սպանվում է: Այնուհետև ապստամբ հայերն հոռոմների հետ համաձայնություն գալու ամեն հույս կորցրած՝ Արշակունի Արտավանի հետ գիմում են պարսիկ արքա Խոսրովին (531—579) Վասակի առաջնորդությամբ, վորը յեռանդնալից ու գործունյա մի մարդ էր:¹⁶⁾

¹⁵⁾ Հ. Չամչ. ունի — «Եկեալ բանակեցան մոտ յԱրնկայ կամ քստ Պրոկոպիոսի՝ յննոքաղաք»: (242):— Արդյոր Նիխախ-ի մեջ կարելի՞ չէ գտնել այս անունը: Նիխախ կա յեվ ձորոսի աջ կողմը, նիշտ այնտեղ, ուր պատերազմն էր տեղի ունենում: Նիխախ կա յեվ Թորթումում, վորը չի կարող լինել:

¹⁶⁾ Այս ուսումնասիրության համար գործածել ենք Պրոկոպի անգլիերեն թարգմանությունը—Procopius, History of the Wars. Transl by H. B. Dewing.

Այս հույն պատմիչի տված պատմական մանրամասնությունները: Այս պատմությունը լուսարանում է հետևյալ կետերը. — Նախ՝ տեղագրական՝ ապաստաբ հայերի կեդրոնն էր Փառաճգիոն, վոր պարսից բաժնում գրա- նվերով հանդերձ սահմանի վրա յեր և Սպերին մոտիկ. սեղը աս զժվարա- գճաց եր ու գահավեժներով ընդհատված, այնպես վոր ճակատ հարդարել կարելի չեր և առաջարկների ու հեղեղատների մեջ ցրված կռվում էին: Այսպիսի մի երկիր և իսկապես Սպեր — Գուրդաշեն — Ոչնաղ և սրանցից դե- պի Թորթում տարածված յերկրամասը: Թե ուր եր գտնվում Ոչնոքաղաքը, ճշտել կարելի չէ. թեպետ Հ. Չամչյան «Ավնիկ» և անվանում՝ առանց տեղը մատնաշնելու, բայց մենք չենք համոզված սրա ճշտությունը. պետք է փնտնել Գուրդաշենի, Ոչնաղի ու Նիխախի շրջաններում, վոր Ճորոխի ձո- րից Հարկեվորի վրայով Թորթումի ավազանը տանող ճամբուն վրա յե: Յերկրորդ՝ գիտենք, թե Սպեր կալվածն էր Ասպես Բագրատունիներին և պատմիչի հիշած «Ասպետյան» դավաճանները Բագրատունիներն են, վորոնք «գորավոր» ու բազմամարդ ցեղ (= նախարարական տոհմ) էին. այս պատ- ճառով էլ փափագում էին վերագառնալ և Սպերին տիրանալ նախկին ի- րավունքներով և անուշախոս: Այսպես բացատրվում է և այն պարագան, վոր նրանց կիներն ու տղաք, վորոնք անշուշտ Սպերում ամրացած էին, ընկնում են Սիտակի ձեռքը և հավանաբար նոյն Սպերի մեջ էլ սպան- վում են: Բագրատունիները ժամանակ չեն ունենում գործադրելու իրենց զավաճանությունը, վորովհետև նախքան բաժանալիների Ասպետյանների մոտ հասնելը, ինչպես նկատում է Պրոկոպ, հոռոմներն արդեն սկսել էին իրենց ուխտագրուժ սպանությունները, յերբ Ասպետյանները դեռ միւս նա- խարարների հետն էին մնում, վորպեսզի կռվի ընթացքին անցնեյին Սիտ- ակի կողմը:

Պերոպի վորդիները դավադրությունը սպանված Սիմեոնի յեղբորորդի Համազասպին և հանձնում կայսրը Սիմեոնին պարզե տված գյուղերը՝ մի- ենույն ժամանակ նշանակելով կառավարիչ (arxon) Հայաստանի վրա (534-ին): Նկատի ունենալով այն հանգամանքը՝ վոր գյուղեր պարզե տըր- վում են միայն ավազ նախարարներին, ինչպես և Հայաստանի վրա բարձր ու պատասխանատու պաշտոնը միմիայն իշխաններին՝ մեծ նախարարնե- րին վերապահված եր, պետք է, վոր Համազասպը ու Սիմեոնն ավազ նա- խարարներից լինեյին՝ այս դեպքում Մամիկոնյաններ: Նույն տոհմից պի- տի լինեյին նաև Սուրով արքային գնացող պատվիրակության առաջնորդ Վասակը՝ Արշակունի Հովհաննեսի «յեռանդուն ու գործունյա» փեսան: Այս յենթադրության հաստատությունը նպաստում են հետևյալ պարագաները: Հայանի յե, թե Արշակունիների և Մամիկոնյանների միջև խնամությունը հաճախակի մի յերևույթ էր: Դարձյալ հայ նախարարական տներից յուրա- քանչյուրն ուներ իր տոհմականները, վորոնք սերունդից սերունդ կրկնվում էին. այսպես Բագրատունիների մեջ՝ Սմբատ, Բագրատ, Աշոտ, Գագիկ և այլն. Սյունյաց տոհմի մեջ՝ Վաղինակ, Բարդես, Վասակ, Մամիկոնյան՝ Վահան, Վարդան, Համազասպ, Մուշեղ, Վասակ և այլն: Վերջապես Վասա-

կի հետառես և վասնգի վարկյանին խիզախ գործկալերալը բուն իսկ Մամի- կոնյան է: Նախարարական անունները հին կապարանի ազդեցությամբ տակ միայն հետզհետե փոխվում են ու խառնվում: Այսպես՝ Արշակունի ու Բագրատունի Հովհաննեսներ, Մամիկոնյան՝ Մանուկ, Սամուել, Սիմեոն կամ Շմավոն, ինչպես անվանում է Հ. Չամչյանը:

Թերևս սխալ չլինի յենթադրել նաև, թե Փառաճգիոնի վոսկեսանքի տեսչությունը, յեթե վոչ միշտ՝ գեթ հաճախ վերապահված եր Մամիկոն- յաններին՝ իրը իրենց կալվածների մեջ գտնված մի հարստություն:

Սիմեոն սպանող Պերոպն ու իր վորդիներն էլ պետք է վոր հայ լի- նին, քանի վոր նույն միջոցին հոռոմների բաժնում կալված ունեյին և դավադրությունը կատարելուց հետո փախչում են Պարսկաստան, ինչպես և մյուս նախարարները:

Արդ՝ մեր ուսումնասիրությունից հետևում է.

ա) Հին Հայաստանում կար վոսկու հանք կամ հանքեր.

բ) Այս վոսկեսանքը գտնվում էր Ճորոխի ավազանում և մասնավորա- բար Թորթում դեպի շրջանում.

գ) Այս վոսկեսանքն ու նրա մշակությունը հայանի եր հույներին ն, ք, Բ. Դ. դարուն և մեր թվականի՝ 2-ին.

դ) Փարպեցին «վոսկեսառ» բառով միայն ակնարկություն ունի այս մասին, ուրեմն է. գարունն էլ շահագործվում եր:



Am

48



3-

3025

2013

